ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18- ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավար՝ Դիանա Գասպարյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալ՝ էդգար Հովհաննիսյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի**

- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Ֆելիքս Պողոսյանի**

- **ՀՀ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ՝**
  - **ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ Հովհաննես Մարգարյանի**

- **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ Գագիկ Խաչատրյանի**

- ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության
  էջմիածնի ռազմական ոստիկանության բաժնի պետ,
  փոխգնդապետ՝ Համլետ Ադամյանի

- ՀՀ Արմավիրի մարզում տեղակայված
  զորամասերի հրամանատարներ՝

  - 60925 զորամասի հրամանատար, փոխգնդապետ ՝ Դավիթ Ալեքսանյանի
  - 86365 զորամասի հրամանատար, գնդապետ՝ Կարեն Սերոբյանի
  - 13516 զորամասի հրամանատար , գնդապետ՝ Ռոլանդ Աթաբեկյանի
  - 80088 զորամասի հրամանատար, գնդապետ՝ Արթուր Հարությունյանի
  - 15166 զորամասի հրամանատար, գնդապետ՝ Ջոն Սամսոնյանի
  - 45529 զորամասի հրամանատար, փոխգնդապետ՝ Տիտալ Խուդոյանի
  - 41096 զորամասի հրամանատար, փոխգնդապետ՝ Արսեն Աբգարյանի

- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
  ենթակայության բժշկական հաստատությունների
  ղեկավարներ՝

  - «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ տնօրեն՝ Գոռ Ասատրյանի
  - «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ՊԺԿ՝ Պավել Մկրտչյանի
  - «Էջմիածին» բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն՝ Լիլիթ Գասպարյանի
  - «Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի
    «Հիսուսի մանուկներ» ԱԿ» ՓԲԸ տնօրեն՝ Գագիկ Հարությունյանի
  - «Զարիշատ /Արամ/Մարտինի Մկրտչյանի անվան
    Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժպ՝ Հարություն Զուռնաչյանի

- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
  կառուցվածքային ստորաբաժանումների
  ղեկավարներ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի**
  Քաղաքաշինության վարչության պետ՝ Աշոտ Հովհաննիսյանի
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի**
  Գյուղատնտեսության և բնապահպանության
  վարչության պետ՝ Արթուր Այվազյանի
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի**
  Առողջապահության և սոցիալական ապահովության
  վարչության պետ՝ Հովհաննես Հարությունյանի
- **ՀՀ Արմավիրի մարզպետարանի**
  Զորահավաքային նախապատրաստության
  բաժնի պետ՝ Անդրանիկ Լալայանի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Համապետական շաբաթօրյակի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2022 թվականի ապրիլի 30-ին շաբաթօրյակ կազմակերպելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման հետ կապված կատարողական կարգապահության ապահովման խնդիրների վերաբերյալ:

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

Ողջունելով ներկաներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ՝ Էդվարդ Հովհաննիսյանը, ներկայացրեց օրակարգային առաջին հարցը, որը վերաբերում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի N ԳՍ/161/8878-2022 գրությանը՝ կապված 2022 թվականի ապրիլի 30-ին անցկացվող համապետական շաբաթօրյակի հետ: Նա նշեց, որ չնայած ՀՀ Արմավիրի մարզում 02.04.2022թ

արդեն անցկացվել է մարզային շաբաթօրյակ, այնուամենայնիվ 30.04.2022թ անցկացվելու է արդեն համապետական շաբաթօրյակ և անհրաժեշտ է, որ բոլորի մասնակցությունը լինի բավականին ակտիվ, և դպրոցների կոլեկտիվները, համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցները և ազգաբնակչությունը ցուցաբերեն համատեղ և ակտիվ մասնակցություն: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադարձավ նաև զորամասերի կողմից պարբերաբար իրականացվող մաքրման գործընթացին:

Խորհրդակցությանը մասնակից զորամասերի հրամանատարները, ներկայացնելով իրենց կողմից իրականացվող գործողությունների ընթացակարգը, տեղեկացրեցին, որ ըստ իրենց աշխատանքային պլանի արդեն իսկ կան իրենց զորամասերին կցագրված մաքրման ենթակա համապատասխան տարածքներ, որը նախապես համաձայնեցվում է համայնքների ղեկավարների հետ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը, անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին, խորհրդակցության մասնակիցներին

առաջարկեց

Համապետական շաբաթօրյակին ապահովել համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, բժշկական կազմակերպությունների և առհասարակ ազգաբնակչության հնարավորինս ընդրգկուն և ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև առաջարկեց համայնքների ղեկավարներին հատկապես ուշադրության կենտրոնում պահել միջպետական ճանապարհների սանիտարական վիճակը՝ օրենսդրությանը համապատասխան, ծանուցելով նաև կենտրոնական փողոցների վրա գտնվող մասնավոր տնտեսավարողներին՝ իրենց տնտեսությանը հարակից հատվածների մաքրման համար: Նա առաջարկեց նաև ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը՝ ակտիվ ներգրավվածություն ունենալ հատկապես հուշարձանների և դրանց հարակից տարածքների մաքրման գործում:

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ Հ.Մարգարյանը առաջարկեց աղբավայրերի մաքրման աշխատանքները բացառապես իրականացնել մասնագիտական ընթացքով և համապատասխան կազմակերպությունների միջոցով:

Օրակարգային երկրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում փաստաթղթաշրջանառության արդյուն ավետ կազմակերպման հետ կապված կատարողական կարգապահության խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզետ էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ փաստաթղթաշրջանառության կազմակերպման կատարողական կարգապահությունն ու ժամկետների պահպանումը շատ կարևոր գործոն է և դրան պետք է վերաբերվել ամենայն պատասխանատվությամբ, քանի որ դրանից է կախված բազմաթիվ վիճակագրական հաշվետվությունների և անհրաժեշտ տեղեկատվությունների կազմումը: Մարզպետը փաստեց, որ երբեմն լինում են ժամկետներ, որոնք հասկանալի պատճառներով անհրաժեշտություն է առաջանում երկարաձգելու կամ առավել ողջամիտ դարձնելու, մարզպետարանը հնարավորինս կարգավորում է դրանք, բայց հիմնականում խնդիրներն առաջանում են համայնքների նոր ձևավորվող աշխատակազմերի աշխատակիցների բացակայության, ոչ պրոֆեսիոնալիզմի կամ համապատասխան հսկողական մեխանիզմի բացակության հետ, որի արդյունքում փաստաթղթաշրջանառության առումով երբեմն խաթարվում է նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատանքը: ՈՒստի պետք է անել հնարավորինս ամեն ինչ և աշխատանքները կազմակերպել այնպես, որ լինեն վերահսկողական կոնկրետ մեխանիզմներ այդ գործընթացների ճիշտ իրականացման համար՝ կախված չլինելով որևէ աշխատակցի բացակա լինելու հանգամանքից:

Օրակարգային հարցերի քննարկման ավարտմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

4/22/2022

X

VERIFIED OCSP 4/22/2022 17:46:37 GMT+4

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արձ.՝Մ.Առուշանյան